Վերապատրաստվող Ուսուցչի

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ ինքնուրույնության,նախաձեռնության եվ ստեղծագործական ունակությունների զարգացումը անգլերենի դասավանդման ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝Հայրապետյան Անահիտ

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի հիմնական դպրոց

Ղեկավար՝Հերմինե Աբրահամյան

Կոտայք 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 5

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 7

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ 11

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Մարդկության զարգացման պատմության մեջ երբևէ չեն եղել փոփոխությունների ավելի հզոր ուժ և խթան, քան տեխնոլոգիաները: 21-րդ դարում տեխնոլոգիաները փոխել են ամեն ինչ՝ մարդկանց ապրելակերպը, սնվելու ձևը, տեղափոխվելու միջոցները, հաղորդակցման ձևը և անգամ մտածելակերպը:

Վերջին տարիներին շատ ավելի հաճախ է բարձրացվում դպրոցում նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման հարցը: Այսինքն՝ ոչ միայն նոր տեխնիկա, այլև նոր դասավանդման ձևեր, նոր մեթոդներ, դասավանդման նոր մոտեցում: Օտար լեզվի ուսուցման գլխավոր նպատակը սովորող ի հաղորդակցության մշակույթի ձևավորումն է, օտար լեզվի գործնական (պրակտիկ) տիրապետումը:

Ուսուցչի խնդիրն է՝ յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որ յուրաքանչյուրին հնարավորություն կտա ցուցաբերել ակտիվություն և ստեղծագործական միտք:

Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները, ինչպիսիք են, համագործակցության ուսուցումը, նախագծային մեթոդը, նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործումը, համացանցը, օգնում են իրականացնել դասավանդման աշակերտակենտրոն մոտեցում, ապահովվում են անհատական ուսուցում՝ ելնելով սովորողի հնարավորություններից, մակարդակից, հակումներից:

Անգլերեն լեզվի դասավանդման ժամանակ ուսուցանող համակարգչային ծրագրերի աշխատանքային ձևերը ներառում են.

- Բառապաշարի ուսուցում
- Աշխատանք արտասանության հետ
- Երիկխոսության և մենախոսության ուսուցում
- Գրավոր աշխատանք կատարելու ուսուցում

Համացանցի՝ մեզ տրամադրվող ռեսուրսները հսկայական են: Օտար լեզվի դասի ժամանակ համացանցի շնորհիվ լուծվում է դիդակտիկ շատ խնդիրներ.

- Ընթերցանության և գրելու հմտության ձևավորում՝օգտագործելով համացանցի նյութերը
- Սովորողի մոտ օտար լեզուն սովորելու ցանկության առաջացում

Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը

սովորել սովորելու

Թիրախ խումբը և շրջանակը
/քանակ, սեռային բաշխում/

31՝ 14 տղա , 17 աղջիկ

Իրականացման ժամանակահատվածը

3.09-17.09

Բացի այդ, աշխատանքն ուղղված է համացանց-տեխնոլոգիաների հնարավորությունների ուսումնասիրությանը, որը թույլ է տալիս սովորողներին լայնացնել իրենց մտահորիզոնը, հարաբերություններ հաստատել ու ամրապնդել դրանք անգլալեզու երկրներում ապրող իրենց հասակակիցների և լեզվակիրների հետ:

Աշխատանքի օբյեկտն ու առարկան: Աշխատանքի օբյեկտն է հանդիսանում ժամանակակից տեխնոլոգիաների դերը, իսկ առարկան ժամանակակից տեխնոլոգիաների դերը ուսանողի ինքնագնահատման գործիք անգլերեն լեզվի դասընթացում:

Հարցը՝ ինչպե՞ս և ի՞նչ մեթոդներով սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունները անգլերենի դասավանդման ընթացքում:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է հանդիսացել ուսումնասիել ժամանակակից տեխնոլոգիաների դերը անգլերեն լեզվի դասընթացում, այդ նպատակից ելնելով ուսումնասիրվել են հետևյալ խնդիրները՝

1. Ուսումնասիրել ինքնագնահատման գործիք անգլերեն լեզվի դասընթացում
2. Վերլուծել Ժանանակակից տեխնոլոգիաների դերը սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը կյանքում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ժամանակակից կրթական համակարգերում դրանք անչափ գործունակ միջոց են, որոնք խթանում են ստեղծագործ մտածողությունը, օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում, խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների առավել ընդգրկուն ընկալման, բարձրացնել առաջադիմությունը և հետաքրքրվածությունը, ստանալ անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև կիրառել ժամանակակից ուսուցման, գնահատման ու ինքնագնահատման մեթոդներ: Դրանք նպաստում են ուսուցիչների աշխատանքի որակի բարձրացմանը, նրանց մասնագիտական գիտելիքների ու օտար լեզվի դասավանդման հմտությունների զարգացմանը:

Խոսելով ինքնագնահատման գործիքների մասին ցանկանում ենք ներկայացնել Եվրոպական պրոֆիլային աղյուսակը (ԵՊԱ), որը գործիք է, որն աղյուսակային ձևով ներկայացնում է օտար լեզվի ուսուցիչների հիմնական իրազեկությունները զարգացման վեց փուլով:

Անունից կարելի է արդեն ենթադրել, որ պրոֆիլային աղյուսակը հանդիսանում է ցանց՝ աղյուսակի տեսքով: Աղյուսակի ձախ հատվածում նշվում են դասավանդման իրազեկությունների և որակավորման կատեգորիաները: Աղյուսակի վերևի հատվածում նշված են զարգացման վեց փուլերը՝սկսնակներից մինչև շատ փորձառու ուսուցիչներ կամ վերապատրաստողներ: Պրոֆիլային աղյուսակի յուրաքանչյուր վանդակում կա համապատասխան նկարագրություն տվյալ կատեգորիայի և զարգացման փուլի վերաբերյալ:[1]

ԵՊԱ-ի առանձին նպատակներն են՝

ՃԻրականացնել ուսուցիչների ներկայումս առկա դասավանդման հմտությունների և իրազեկությունների ինքնագնահատումն ու պատկերացումը

[1] Hanushek, E. The Economic Value of Higher Teacher Quality", Economics of Education Review, volume 30, Issue 3, June 2011,

ՁԿազմել տվյալ ուսուցման կենտրոնի ուսուցիչների անհատական կամ խմբային պրոֆիլներ, որոնք հստակ նկարագրությունների շնորհիվ պատկերում են համապատասխան մակարդակը իրազեկությունների տարբեր ոլորտներում:

ՁԱռանձնացնել նրանց, ովքեր վերապատրաստումների կարիք ունեն, որպեսզի հետագայում հնարավոր լինի կազմել մասնագիտական զարգացման և որակավորման անհատական ծրագրեր:

ՁԼեզվի ուսուցման կենտրոնների տնօրեններին տրամադրել մի գործիք, որի միջոցով նրանք կկարողանան ընտրություն կատարել աշխատանքի համար դիմողների միջև

ՁՆպաստել Եվրոպայում ընդունված մանկավարժական բազմաթիվ սկզբունքների և լեզվի դասավանդման ավանդույթների փոխըմբռնմանը և փորձի փոխանակմանը

ՁԽթանել լեզվի դասավանդման չափանիշների թափանցիկությունը և թեթևացնել ուսուցիչների շարժունակությունը Եվրոպայում:

Դասական գնահատումը, ընդունված ստանդարտները սպանում են սովորողի ուսումնառության մոտիվացիան, հանգեցնում ստելու կարողության ձևավորման, զրկում հետազոտելու, ինքնակրթության, իրար նման չլինելու հնարավորություններից:[2]

[2] Hanushek, E and Woessmann, L, How Much Do Educational Outcomes Matter in OECD Countries?, NBER, 2010

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Օտար լեզվի դասավանդման խնդիրները ներկայումս առավել ակնառու են դառնում, երբ կարևորվում են սովորողների ինքնուրույնությունը, ստեղծագործական նախաձեռնությունը, ազատ զարգացումը: Սովորողի մեջ գիտելիքի, կարողությունների, հմտությունների, ճանաչողական հետաքրքրությունների ձեռքբերման պահանջ ձևավորելու կարևոր պայման է դրական խթանը, իսկ օտար լեզվի ուսումնասիրության պարագայում կարևորագույն պայմանը՝ երկխոսությունն է: Հենց այս երկխոսության միջոցով և ընթացքում էլ ձևավորվում է սովորողի աշխարհահայացքը: Գիտելիքը, կարողությունը և հմտությունը հանդես են գալիս արդեն ոչ որպես միակ նպատակ, այլ որպես մասնագիտական գործունեություն իրականացնելու միջոց, գործիք:

Դասի յուրաքանչյուր փուլում, սովորողի կամ առարկայական ծրագրի պահանջների ապահովման գործընթացում գլխավոր դերակատարը սովորողն է: Ուսուցիչը այն հաղորդիչն է, որը կապում է երեխային առարկայի հետ, նրան ներքաշում երկխոսության մեջ: Երկխոսության ընթացքում անչափ կարևորում են սովորողի արժեքային համակարգի ձևավորումը, նրա բարոյական նկարագրի կերտումը: Երկխոսության համար բարենպաստ պայմաններ ապահովելու նպատակով անհրաժեշտ է ընտրել դասավանդման այնպիսի մոտեցումներ, որոնք կխթանեն հոգևոր, մտավոր և բարոյական ինքնուրույնություն ունեցող սովորողի ակտիվ ու անկաշկանդ գործունեությունը: Օտար լեզվի դասն ունի իր առանձնահատկությունները, և ի տարբերություն մյուս առարկաների՝որպես հիմնական նպատակ առաջ է քաշվում սովորողների հաղորդակցական ունակությունների ձևավորումը:

Սնվելով հեղինակային կրթական ծրագրի տրամադրած, ստեղծած մանկավարժական զինանոցից՝ գնահատման արդյունքում ունենում ենք սովորողների ինքնուրույն, գիտակից հավաքանի: Դժվարությունները գնահատման մասով երկու դեպքում են առաջանում.երբ ծնողը սկսում է համեմատել իր անցած դպրոցի հետ, և երկրորդ՝երբ սովորողը կրթահամալիր է տեղափոխվում այլ դպրոցից: Բոլոր սովորողները չեն կարող ունենալ նույն վարքը, ուսումնական մասով՝ նույն գիտելիքները, կարողությունները,

հմտությունները: Ինչպե՞ս մոտիվացնել սովորողներին, ինչպե՞ս ներառել: Նախագծային ուսուցումը՝իր կրթական միջավայրով, գտնված է:

Հնարավորությունները շարունակ մեծանում են, սովորողներին ազատում բոլոր ճնշումներից, պարտադրանքի ձևերից: Այս կրթական աշխարհում հայտնվելով՝սովորողն արդեն ինքն է դառնում գնահատող:Իր ձեռքին են երկու հրաշալի գործիք՝ընտրությունը և գնահատումը: Սրանցից չի կարելի զրկել սովորողներին: Անհրաժեշտ է ինքնագնահատման գործիքները անընդհատ կիրառել կրթական ոլորտում և մանկավարժական միջավայրը հարստացնել նոր գործիքներով ու հնարավորություններով:[3]

Օրինակ՝ սովորողները ուսումնական ճամփորդության ժամանակ Մատենադարանում իրենց դրսևորել են ակտիվ, աղմկել են, չեն լսել աշխատակցի խոսքը: Ի՞նչ անել հետո....պատժել՝ ծնող հրավիրել, զրկել ճամփորդելու հնարավորությունից: Նշեմ նաև, որ նշված սովորողները չեն առանձնանում լավ վարքով և բնութագրերը ուսուցիչների կողմից դրական չեն:

Խմբի ղեկավարը նշված սովորողներին առանձնացրեց ողջ խմբից, և նրանք մասնակցեցին մեկ այլ ճամփորդության: Իհարկե, սովորողները զարմացած էին, քանի որ դասական առումով իրենք այլ գործողությունների ընթացք էին ակնկալում: Նախ՝ ճամփորդությունը նրանց նվեր եղավ, իրենց վերագտնելու, ինքնագնահատելու հնարավորություն, և առիթ՝ երևույթը, մանկավարժությունը գնահատելու: Գիտելիքը անհատական երևույթ է, ընդորում մարդու կուտակած փորձն ու հենց նոր ստացած տեղեկությունը սկսում են համագործակցել և փոխազդել միմյանց հետ: Տվյալ դեպքում, որքան իրական ու շոշափելի է գիտելիքը, այնքան ավելի հավանական է դառնում այն հետագայում, արդեն կյանքում դրա գործածությունը:

Այս տեսության կողմակիցները պնդում են, որ գիտելիքները ձեռք են բերվում որոշակի համատեքստում և իրավիճակային բնույթ ունեն:

Օտար լեզվի ուսուցման հիմնական նպատակը հաղորդակցության հմտությունների ձևավորումն է, իսկ մնացած բոլոր խնդիրները (կրթական, դաստիարակչական, զարգացնող) լուծվում են գլխավոր նպատակի իրականացման ճանապարհին:

---

[3] Аверина М.Н., Современный урок иностранного языка: Учебно-методическое пособие. Ярославль: Изд-во ЯГПУ имени К.Д. Ушинского, 2004.

Ուսուցչի խնդիրն է `յուրաքանչյուր աշակերտի համար ստեղծել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որ յուրաքանչյուրին հնարավորություն կտա ցուցաբերել ակտիվություն և ստեղծագործական միտք: Նոր մոտեցումները օտար լեզվի դասավանդման պրոցեսում, ինչպիսիք են ակտիվ ուսուցումը, ինտերակտիվ մեթոդները, նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործումը, համացանցը, օգնում են իրականացնել դասավանդման աշակերտակենտրոն մոտեցում, ապահովում են անհատական ուսուցում՝ելնելով սովորողի հնարավորություններից, մակարդակից, հակումներից: Առաջնային նշանակությունը տրվում է նյութն ընկալելուն, բովանդակության փոխանցմանը և իմաստի արտահայտմանը, որն էլ տանում է լեզվի քերականական կառույցների և բառերի անուղղակի ուսուցմանը:

Մեծ տեղ է հատկացվում ակտիվ հաղորդակցական կարողությունների զարգացմանն ու կիրառմանը: Այն իրականացվում է մենախոսությամբ, երկխոսությամբ, հարցազրույցի, դերախաղի, մտքերի փոխանակմամբ, շարադրանքի ներկայացմամբ, տեղեկատվության փոխանցմամբ, համագործակցային առաջադրանքներով և քննարկումներով: Այս բոլորը իրականացվում է անհատական, զրույցներով, խմբերով: Աշակերտակենտրոն միջավայրում համագործակցող աշակերտները ձեռք են բերում ճանաչողական ակտիվություն: Օտար լեզվի ուսուցիչը պետք է լինի մեթոդապես գրագետ, ժամանակակից տեխնոլոգիաները ազատորեն տիրապետող և կիրառող:

«Ո՞րն է ուսուցման ամենից արդյունավետ մեթոդը» հարցի լավագույն պատասխանն այն է, որ դա կախված է նպատակից, աշակերտից, ուսուցանվող նյութի բովանդակությունից և ուսուցչից: Հաջորդ լավագույն պատասխանն է «երբ աշակերտներն իրենք են ուսուցանում այլ աշակերտների»:

Ամենից հաճախ, ավանդական դասարաններում աշակերտները սոսկ պասիվ կերպով են ներգրավված ուսումնառության գործում, այսինքն՝լսում են դասավանդողին, դիտում երբեմն-երբեմն ցուցադրվող սլայդը կամ (պահանջված դեպքում) ընթերցում դասագիրքը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ նման պասիվ ներգրավվածությունը սովորաբար հանգեցնում է աշակերտների կողմից գիտելիքների սահմանափակ մտապահման:

Ժամանակակից տեխնոլոգիան սովորողների և ուսուցիչների համար ապահովում է հարուստ, բազմազան ուսումնական միջավայր: Մեր

ժամանակներում կրթության հանդեպ պահանջները լավագույնս իրականացվում է մեդիապայմաններում՝ անհատական համակարգչի առկայությամբ, քան ուսուցման հին տեխնոլոգիաների կիրառմամբ: Համակարգիչների միմյանց հետ կապը, ոչ միայն ապահովում է տեղեկատվական մուտք, այլև մեծապես ուժեղացնում է կապի մեջ գտնվողների հաղորդակցական հնարավորությունները: Ընդ որում, տեղեկատվության և հաղորդակցության բովանդակությունը արդիական է և անհրաժեշտ:

Եթե ավանդական ուսուցման ընթացքում դասավանդողների անելիքը սահմանումներ տալն է, համապատասխան մեթոդական աջակցություն ստանալը, հանդեսներ կազմակերպելն ու շնորհանդեսներ նշելը, մեդիամիջոցների ընտրությունն ու ուսումնական գործընթացի վերահսկողությունը, ապա այսօր ոչ միայն կրթական մոտեցումներն են նոր, այլ նաև ուսուցչի գործառույթներն են այլ: Նախ պետք է կարողանալ ուսուցումն իրականցնել տարածության մեջ, ընդ որում այդ ամենը պետք է հիմնված լինի ոչ թե իր՝ ուսուցչի, այլ սովորողի անհատական փորձի վրա, ուսուցման գործընթացում խթանի ինքնակառավարում և ինքնահսկողություն:[4]

Օրինակ, եթե ցանկանում ենք սովորողներին դասարանում առաջարկել սկավառակ (CD-ROM) օգտագործել, ապա ուսուցիչը պետք է իմանա նաև այդ գործիքը, որպեսզի կարողանա, որպես աշխատանքային գործիք օգտագործել դրա հնարավորությունները:

Եթե ուսուցիչը նախատեսել է դասագործընթացում ներառել աշխատանք համացանցով, ապա նախօրոք պետք է մտածի և պլանավորի աշխատանքի հնարավոր ուղղությունները, կազմի համապատասխան առաջադրանքներ, որոնք կարող են օգնել գտնելու տվյալ տեղեկությունը ևաշխատելու դրանց հետ:

Դասագործընթացում ուսուցչին վերապահված է լինել դիտորդ, խորհրդատու: Ուսուցիչը ժամանակը պետք է վերահսկի այնպես, որ կարողանա զբաղվել սովորողների ունակությունների ու հմտությունների վերլուծությամբ, ճանաչի նրանց անհատական խնդիրներն ու դժվարությունները, իրականացնի անհատական խորհրդատվություն, ուսուցման անհատական աջակցություն:

[4] http://nina-gusnedy.blogspot.am/2011/03/history-of-toefl.html

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Օտար լեզվի ուսուցման առաջնային նպատակներն են.

- զարգացնել բազմալեզվային իրազեկություն
- զարգացնել խոսելու կարողությունները (լսել, կարդալ, գրել, խոսել) երկու օտար լեզուներով
- մշակել հաջող հաղորդակցման կարողություն այլ մշակույթի ներկայացուցիչների հետ
- ձևակերպել դրական տրամադրվածություն լեզվամշակութային բազմերանգության նկատմամբ, որպեսզի այն ընկալվի, որպես աշխարհի բազմազանության մասնավոր դրսևորում
- զարգացնել տարբեր մշակութային համատեքստեր ու տեքստեր հասկանալու կարողություն
- անհատին պատրաստել տարբեր լեզվամշակութային ինքնության ներկայացուցչի հետ համագործակության
- զարգացնել լեզուներն արդյունավետ սովորելու կարողություն:

Այս կերպ, այսօր աշխարհում իր գործածության հաճախականությամբ առանձնացվում է 7 միջազգային լեզու: Դրանք այն լեզուններն են, որոնք մեծաքանակ մարդկանց կողմից օգտագործվում են հաղորդակցության նպատակով: Եվ ինչպես արդեն նշվել է, դրանցից առաջատարը անգլերենն է: Այս լեզուն հարկավոր է գրեթե ամենուր: Առանց անգլերենի այսօր դժվար է գտնել լավ աշխատանք, հեշտորեն յուրացնել նոր տեխնոլոգիաները, ուսանել Եվրոպայի ու Ամերիկայի համալարաններում: Վերջապես, անգլերենը համարվում է ‹‹Միացյալ ազգեր››, ‹‹Հյուսիսատլանտյան դաշինք››, ‹‹Փրկենք երեխաներին››, ‹‹Յունեսկո››, ‹‹ԵԱՀԿ››, ‹‹Բժիշկներ առանց սահմանների›› և այլ միջազգային կազմակերպությունների, կարևոր ֆորումների ու բանակցությունների պաշտոնական լեզու: Անգլերենը նաև 20 աֆրիկյան երկրների պետական լեզուն է:

Ուսուցման թվայնացումն անխտիր կապված է այն փաստ ի հետ, որ համակարգիչը հանդիսանում է մտավոր զարգացման աղբյուր իր բոլոր առումներով: Ռ. Վիլյամը և Կ.Մակլին իրենց «Համակարգիչը դպրոցում» հոդված ի մեջ գրում են.

«Համակարգիչն ունի մի յուրահատկություն, որն ի հայտ է գալիս այն ուրիշ ին որպես ուսուցանելու գործիք օգտագործելիս, և նրա «անշունչ (անհոգի)» լինելն իրեն լավ օգնական է դարձնում գիտելիքներ ձեռքբերելու հարցում: Այս սարքը կարող է շատ «սիրալիր» կերպով շփվել օգտվողի հետ և նույնիսկ որոշ պահերին ըմբռնումով մոտենալ և երբեք չբարկանալ և ցույց չտալ, որ ձանձրույթ է զգում, օրինակ նույն արտահայտությունը բազմաթիվ անգամներ կրկնելուց»: Այս իմաստով անհատական ուսուցման մեջ համակարգչի օգտագործումն ամենաօգտակար ձևերից մեկն է:

Անգլերեն լեզվի ուսուցման հիմնական նպատակը հաղորդակցության հմտությունների ձևավորումն է, իսկ մնացած բոլոր խնդիրները (կրթական, դաստիարակչական, զարգացնող) լուծվում են գլխավոր նպատակի իրականացման ճանապարհին: Առաջնային նշանակութունը տրվում է նյութն ընկալելուն, բովանդակության փոխանցմանը և իմաստի արտահայտմանը, որն էլ տանում է լեզվի քերականական կառույցների և բառերի անուղղակի ուսուցմանը: Վերջիններս սովորողը յուրացնում է անընդհատ շփման ընթացքում՝առանց կենտրոնանալու, քերականական կանոնները պարզապես անգիր անելու վրա:

Որպես ինֆորմացիոն համակարգ, համացանցն իր օգտատերերին առաջարկում է ինֆորմացիայի ապաշարների հսկայական տեսականի.

- Էլեկտրոնային փոստ(e-mail), տելեկոնֆերանսներ (usenet), վիդեոկոնֆերանսներ,
- Անձնական ինֆորմացիա հրապարակելու, անձնական էջ ստեղծելու և համացանցում տեղադրելու հնարավորություն,
- Մուտք ինֆորմացիոն պաշարներ
- Տեղեկատվական կատալոգ (Yahoo, InfoSeek/UltraSmart, LookSmart, Galaxy)
- Փնտրողական համակարգեր (Alta Vista, HotBob, Open Text, WebCrawler, Excite),
- Առցանց հաղորդակցություն (Chat)

Այս բոլոր ռեսուրսները /պաշարները/ կարող են օգտագործվել դասի ընթացքում:[5]

Հաղորդակցական և միջմշակութային հաղորդակցության հմտություններ ձեռքբերելն անհնարին է առանց հաղորդակցության պրակտիկայի և համացանցի պաշարների օգտագուրծումը օտար լեզվի դասի ընթացքում պարզապես դառնում է անհրաժեշտություն: Համացանցի վիրտուալ միջավայրը թույլ է տալիս դուրս գալ ժամանակի և տարածության հասկացությունների սահմաններից ակենդանի շփում է ապահովում իր օգտատերերի համար:

TOEFL-ը, պաշտոնապես հայտնի է որպես՝ Test of English as a foreign language, սեփական կարողությունները օգտագործելու և անգլերենն ակադեմիական մակարդակով հասկանալու թեստ է: Այն կազմակերպվում և վերահսկվում է Educational Testing Service (ETS)-ի կողմից: Թեստն անհրաժեշտ է ոչ բնիկների (non-natives) անգլերենի մակարդակի ապահովման համար, ովքեր ցանկություն ունեն սովորել ԱՄՆ-ի համալսարաններում:

Հավելյալ հաստատությունները, ինչպիսիք են կառավարության գործակալությունները, բիզնեսները կամ ֆինանսական աջակցության ծրագրերը՝ կարող են նույնպես պահանջել այս թեստը: TOEFL-ի արդյունքները ուժի մեջ են մինչև երկու տարի: Երկու տարի հետո անհասանելի են:

IELTS (International English Language Testing System), անգլերեն լեզվի գիտելիքի ստուգման միջազգային համակարգ է, որը հնարավորություն է տալիս գնահատել լեզվի իմացության մակարդակը և հմտություններն այն անձանց մոտ, որոնց համար անգլերենը հանդիսանում է օտար լեզու: Լայն տարածում ունի Մեծ Բրիտանիայում, Նոր Զելանդիայում, Ավստրալիայում կրթությունը շարունակել ցանկացող ուսանողների մոտ, նաև տարածում ունի ներգաղթյալների մոտ: Մրցակից թեստային համակարգ TOEFL-ը, ի տարբերություն IELTS-ի, լայն տարածում ունի ԱՄՆ-ում և Կանադայում: 2012 թվականին IELTS-ի քննություն հանձնողների քանակը հատեց 2 միլիոնը,այն օր օրի ավելի լայն ճանաչում է ձեռքբերում ամբողջ աշխարհում:

IELTS-ը պատկանում է հետևյալ կազմակերպություններին՝

[5] Օտար լեզուների առարկայական ծրագիր, գլուխ XXIV, http://www.mes.gov.ge/uploads.gegmobi/4.doc, (12.10.2018):

- Cambridge ESOL Examinations
- Բրիտանական խորհուրդ
- IDP: IELTS Australia:

TOEFL-ի կամ IELTS-ի քննությունը բարեհաջող հանձնելու համար ուսանողը պետք է տիրապետի ոչ միայն լեզվական, այլ նաև մի շարք այլ հմտություններին, որոնցից է արագ լսելու ընդունակությունը, արագ միտքը կառուցելու և նոր, հետաքրքիր գաղափարներ ներկայացնելու կարողությունը, տիրապետել ոչ միայն անգլերեն լեզվին, այլև ունենալ լայն մտահորիզոն, լայն աշխարհայացք, գիտելիքի համապատասխան պաշար, քանզի թեստում առկա են բազմաթիվ թեմաներ կապված ընդհանուր գիտելիքների հետ:

TOEFL-ի և IELTS-ի առաջադրանքները հետևյալն են՝ ընթերցանություն, լսելու առաջադրանք, խոսելու առաջադրանք և գրելու առաջադրանք:[6]

Ընթերցանելի հատվածները ակադեմիական թեմաներով են, այդ հատվածները պահանջում են հասկանալ հռետորական ֆունկցիաները, ինչպիսիք են պատճառ-ազդեցություն, համեմատություններն ու իրավիճակները: Հենց այստեղ էլ պետք են գալիս մեր անցած նախորդ առարկաները՝ հետևյալ պատասխանները ճիշտ կառուցելու համար: Լսողության մասը բաղկացած է վեց լսողական հատվածներից: Հատվածները պարունակում են երկու աշակերտների զրույց և չորս ակադեմիական դասախոսություններ կամ քննարկումներ:Հարցերը մտադրված են չափել գլխավոր մտքի հասկանալու կարողությունները, էական դետալները, ինֆորմացիայի կազմակերպումը, խոսողի նպատակն ու նրա մոտեցումը:[7] Խոսելու կարողությունը իրենից ենթադրում է հետևյալը՝ թեստ հանձնողները կարդում են փոքրիկ հատված, լսում են ակադեմիական դասախոսությունից հատված կամ զրույց համալսարանական կյանքի մասին և պատասխանում՝միավորելով անհրաժեշտ տեղեկատվությունը տեքստից և զրույցից: Գրելու մասը չափում է թեստ հաձնողի ակադեմիական մակարդակով գրելու ունակությունը, երկու առաջադրանքների միջոցով: Առաջին առաջադրանքում, թեստ հանձնողները կարդում են հատված ակադեմիական

[6] https://www.ielts.org/info-pages/about-us

[7] Looney, J. W. (2009), “Assessment and Innovation in education”, OECD Education Working Papers, No. 24

թեմայով և դրանից հետո լսում են խոսողի քննարկումը տվյալ թեմայի շուրջ: Թեստ հանձնողը պետք է դրանից հետո գրի կրճատ քաղվածք կարևոր հատվածների մասին՝ լսողական հատվածից և բացատրի, թե ինչպես կապել կետերը ընթերցանության հատվածից: Անկախ առաջադրանքից, թեստ հանձնողները պետք է գրեն էսսե, որը փաստում, բացատրում և նպաստում է իրենց մտքին, ոչ թե առաջնորդվեն միայն անձնական նախընտրություններով: Ստացվում է հետևյալը, որ այստեղ պարզապես անգլերենի իմացությունը բավարար չէ հետևյալ թեստերը բարեհաջող հանձնելու համար: Ուսանողը պետք է կարողանա տիրապետել ոչ միայն լեզվին, ոչ միայն ունենա լեզվական հարուստ բառապաշար կամ քերականական գիտելիքներ, այլ պետք է ունենա ընդհանուր գիտելիքներ գիտության մասին, պետք է ունենա լայն մտահորիզոն, պետք է լինի այդ միջավայրի և ինչ ու չէ այդ մշակույթի մասնակից, կարողանա զարգացնել իր լսելու, կարդալու և գրելու հմտությունները: Եվ հետևաբար այն ուսանողները, ովքեր զարգացնում են հետևյալ չորս հմտությունները և բարեհաջող հանձնում իրենց քննությունը, կարողանում են հասնել որոշակի փոփոխությունների իրենց կյանքում: (Michael O. Martin, Ina V.S. Mullis, Pierre Foy, and Gabrielle M. Stanco Timss 2011 International Results in Science)

ՏԿՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Gap-filling (լրացում)

Լրացում մեթոդիկայի դեպքում աշակերտը լրացնում է բաց թողնված տառը կամ բառը: Ժամանակաձևերի ստուգման դեպքում այս մեթոդիկան կիրառվում է հետևյալ կերպ՝ բաց է թողնվում բառը՝ առաջարկվելով դրա անորոշ ձևը վերևում կամ հենց նախադասության կողքին: Առաջարկվում են կամ առանձին նախադասությունների կիրառում կամ տեքստի: Նման մեթոդիկայի կրառումը բավականին դյուրին է: Սակայն ուսուցիչը պետք է հաշվի առնի, որ մեկ բաց թողնված բառի լրացման համար կարող են լինել մի քանի ճիշտ պատասխաններ: Դրանց հնարավոր կիրառումը պետք է քննարկվի:

Task 2. Complete using the correct Past Indefinite form of the verbs in the box. You may have to use some negative forms.

Լրացնել նախադասությունը՝ օգտագործելով տրված բայերը անցյալ անորոշ ժամանակաձևում: Հնարավոր է ժխտական ձևերի կիրառում:

come • know • make • send • take

1. 1 got to the post office just before it closed and the letter.
2. We invited Stephanie to the party, but she
3. Jack lost his job because he too many mistakes.
4. Everyone that it was Bill's fault, but nobody said anything.
5. Karen the keys from the kitchen table and ran out the door.

Task 3. Complete the following text using the past tense of the verbs in brackets.

Լրացնել հետևյալ տեքստը՝ գործածելով փակագծում գրված բայերը անցյալ անորոշ ժամանակաձևում:

Anna's holiday _____ (be) great last summer. She _____ (stay) in a college in England for two weeks. She _____ (have) classes in the mornings and in the afternoons she _____ (do) some sports like swimming or tennis. In the evenings she often _____ (go) dancing or _____ (watch) films with her new friends. At weekends they _____ (drive) to some interesting places. Once they _____ (visit) Marwell Zoo where they _____ (see) some beautiful animals. Anna _____ (not like) the food at the college but

that _____ (not be) a problem. She _____ (meet) a lot of people and _____ (learn) some English. All the students in her class _____ (be) sorry to go home. They all _____ (promise) to come back next summer.

Առաջադրանք երկրորդ

Աղյուսակ *2*

Complete using the correct Past Indefinite form of the verbs in the box. You may have to use some negative forms.					
Առաջադրանքի կատարման արդյունքները	Ուսանողնե-րի թիվը	Ճիշտ	Սխալ	Թերի պատասխան կամ պատասխանի բացակայություն	Սխալ պատասխան-ների տոկոսային արտահայտու-թյունը
9 [1]	18	15	3	0	17%
9 [2]	23	18	4	1	22%
9[3]	19	17	2	0	11%
9 [8]	16	15	1	0	6%
9 [9]	24	22	2	0	8%
Ընդամենը	100	87	12	1	13%

Տրամագիր *2.1*



Թույլ տրված սխալները վկայում են աշակերտների քերականական և բառապաշարային մեխանիզմների ոչ բավարար ձևավորվածության մասին: Պատճառն այն է, որ սովորողները այս կամ այն չափով յուրացվող լեզվական նյութի սահմաններում, իրենց ծանոթ թեմաների կամ իրադրությունների շուրջ դժվարանում են համապատասխան նախադասություն կազմել, կաշկանդվում են տարբեր հաղորդակցական իրադրություններում ինքնուրույն հաղորդակցվել, իրենց մտքերն արտահայտել: Սխալները մեծ մասամբ

առաջացել են մայրենի լեզվի բացասական ներթափանցման հետևանքով՝ կապված քերականական ձևերի, դարձվածների, բառակապակցությունների սխալ ընտրությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սովորողներին կարելի է առաջարկել խմբային աշխատանք, օրինակ՝հետազոտական աշխատանք կատարել, որոնք կներառեն առօրյա կյանքի բոլոր ոլորտները. թարգմանություններ, սպորտ, եղանակ, մշակույթ և այլն:

Համացանցով օտար լեզվի դասավանդմանը ներկայացված նոր պահանջներից մեկն էլ հանդիսանում է համագործակցության ապահովվումը, կամ ինչպես այժմ ընդունված է անվանել՝ ինտերակտիվություն:

Սովորեցնելով տվյալ լեզուն համացանցը նպաստում է խոսելու և արտահայտվելու հմտությունների ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը, քերականություն սովորելուն՝դարձնելով լեզվի ուսուցումն ավելի արդյունավետ (էֆֆեկտիվ):

Համացանցը զարգացնում է սովորողների սոցիալական և հոգեբանական հատկանիշները, նրանց ինքնավստահությունը և կոլլեկտիվում աշխատելու հմտությունները, ստեղծում է բարենպաստ պայմաններ ուսուցման համար՝հանդիսանալով ինտերակիվ մոտեցման գործիք:

Համացանցն անկասկած կարող է օգտագործվել որպես քերականության զարգացման, բառապաշարի հարստացման և գիտելիքների ստուգման աղբյուր: Այն ներառում է բոլոր հնարավոր բառագիտական, քերականական, ֆոնետիկական վարժություններ, թեստեր, կարդալու նյութեր, IQ թեստեր և այլն: Դասավանդողը կամ էլ սովորողները կարող են իրենց հարմար կայքերից օգտվել դասի ընթացքում, կամ էլ հանձնարարություններ կատարել այդ կայքերից օգտվելով:

Անգլերեն լեզվի իմացությունը միջազգային տեխնոլոգիաների օգնությամբ հնարավորություն է տալիս.

- Այսօր միջազգային կազմակերպություններում աշխատելու, պետության տնտեսությունը զարգացնելու, լայն մտահորիզոն ունենալու և

գլոբալ աշխարհի մի մասը դառնալու համար ուսանողը պետք է տիրապետի անգլերեն լեզվին:

- Ուսանողը ուսանելով IELTS կամ TOEFL հնարավորություն է ունենում ՀԱՀ-ում և արտասահմանյան բուհերում ուսում ստանալու, զարգացնելու իր մասնագիտական գիտելիքները, ծանոթանալու նոր միջավայրի, նոր մշակույթի հետ, մասնակցել իրականացվող ամառային ճամբարներին, սեմինարներին, ծրագրերին (‘ERASMUM’, ‘TEMPUS’, ‘London eye’) և այլն, այդ կերպ հնարավորություն ունենալով ապրել վերընթաց մոբիլություն:
- Այն ուսանողները, ովքեր արդեն իսկ բարեկամներ ունեն արտերկրում, նրանց կողմից խրախուսվում են բարձրագույն կրթություն ստանալու համար դիմել արտերկրի բուհեր, հետևաբար նաև ուսանել անգլերեն:
- Ուսանողները պարապում են այդ թեստերը, քանզի իրենք ունեն մեծ հույսեր ու սպասումներ կապված իրենց ապագայի հետ. հույս, որ կունենան վառ ապագա, դա էլ համեմատական փորձից է գալիս, երբ, օրինակ՝ ուսանողները տեսնում են նրանց, ովքեր ժամանակին պարապել են անգլերեն և, ապա TOEFL կամ IELTS, կարողացել են հանձնել քննությունը և, ենթադրենք, գնացել են ԱՄՆ ուսում ստանալու, ծանոթացել նրանց մշակույթին, ձեռք բերել էլ ավելի մասնագիտական պաշար, մեծացրել իրենց ծանոթության ցանցը և ապա վերադառնալով իրենց երկիր՝ հեշտությամբ գտել են իրենց համար ցանկալի աշխատանք, պարզ է, որ այն ուսանողները, ովքեր ականատեսն են այդ փորձի և ունեն ցանկություն դրսում կրթություն ստանալու, չեն սահմանափակի իրենց նման հնարավորությունից:
- Ուսանողները կարողանալով հանձնել TOEFL կամ IELTS-ի քննությունը իրենց բնութագրում են ավելի ինքանվստահ, դրա պատճառն էլ անգլերենի իմացության ապացույցն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Hanushek, E. The Economic Value of Higher Teacher Quality", Economics of Education Review, volume 30, Issue 3, June 2011,
2. Hanushek, E and Woessmann, L, How Much Do Educational Outcomes Matter in OECD Countries?, NBER, 2010
3. Looney, J. W. (2009), “Assessment and Innovation in education”, OECD Education Working Papers, No. 24
4. http://nina-gusnedy.blogspot.am/2011/03/history-of-toefl.html
5. https://www.ielts.org/info-pages/about-us
6. Аверина М.Н., Современный урок иностранного языка: Учебно-методическое пособие. Ярославль: Изд-во ЯГПУ имени К.Д. Ушинского, 2004.
7. Гальскова Н.Д., Гальскова Н.Д., Гез Н.И., Теория обучения иностранным языкам: Лингводидактика и методика: учебное пособие для вузов Текст. Изд. 2-е, испр. Москва: Академия, 2005.
8. Ляховицкий М.В., Общая методика обучения иностранным языкам//Москва, 1991.
9. Полат Е.С., Метод проектов на уроках иностранного языка // Иностр. языки в школе, 2000, № 2.
10. Поляков О.Г., Английский язык для специальных целей: теория и практика. учебное пособие. Москва: НВИ-ТЕЗАУРУС, 2003.
11. Օտար լեզուների առարկայական ծրագիր, գլուխ XXIV, http://www.mes.gov.ge/uploads.gegmobi/4.doc, (12.10.2018):
12. Լեզուների իմացության/ իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Ստրասբուրգ, Կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողով, Լեզվի քաղաքականության վարչություն, Թարգմանություն, խմբագրությամբ՝ Ս. Ղոլյան, Մ. Աստվածատրյան և ուրիշներ, Երևան, 2005: